ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տես. 1919 Բզմ. էջ 36)

Է. — ԻՇԽԱՆԱԿԱՆՔ։ — Մեր նախաբարք ալ ունէին արքային պէս իրենց սեպհական դրօշները, շատ անգամ յիշատակուած պատմութեան մէջ։ Ագաթանգեղոս կ'աւանդէ երեւելի իշխանաց ընկերեալ Լուսաւորչին դէպ ի կեսարիա՝ «զօրօք, նշանակօք, իւրաքանչիւր գնդոք» (602)։ Աւարայրի ճակատամարտէն յառաջ՝ Պարսից բանակին հրամանատարը կը հարցափորձէր՝ թէ քանի՝ «պարագլուխք» կային հայ բանակին մէջ. և «դրօշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր» (Եղիշ. 180), որոցմէ իւր բանակին վրայ ևս կ'երեւէին (Փարպ. 211)։ Մամիկոնեան Վասակայ հեծելազօր բանակը կը նկարագրուի «դրօշաւորք կազմ նշանաւորք» (Փաւստ. Դ, Ի)։ Բագուանի ճակատամարտին սկիզբը՝ Մուշեղ մամիկոնեան «գիւր նշանն և զգէնն» օրհնել տուաւ Ս. Ներսեսի (նոյն, Ե, Դ)։ Մանուելի բանակին մէջ ընդդէմ Մերուժանայ՝ կը տեսնենք նոյնպէս «նշանս արձակեալք, դրօշս փոդփոդեալս» (նոյն, Ե, Թ)։ Հայոց ճակատին մէջ հակառակ Մուսէի՝ «դրօշքն տարածանէին և նշանքն փոդփոդէին» (Թով. արծ. 121)։ Նոյնպէս ուրիշ շատ տեղեր կը ծածանին իշխանական վառերը։

Փաւստոս Հայաստանի մէջ կը հաշուէ ինն հարիւր նախարարութիւն, և Մեսրոբ չորս հարիւր։ Արդեօք նոյնքան ալ դրօշներ կային։ Հաւանական չէ. այլ այն մեծ իշխանք միայն ունէին, որոնք կարող էին բանակին տալ յատուկ զօրագունդ և առաջնորդել անոր։ Այս պարագայն զգալի է եթէ Ագաթանգեղոսի վերոյիշեալ խօսքէն՝ ի կեսարիա երթին առթիւ, և եթէ մանաւանդ Փաւստոսի մէկ վկայութենէն՝ թէ Ս. Ներսիսի ընտրութեան համար գումարուեցան «մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրօշուց տեարք» (Դ, Գ)։ Ուրեմն ամէն նախարար առանձին գնդի ու դրօշի տէր չէր, որով հարկ կը համարի պատմիչս յատկապէս յիշատակել հոս այդ պարագայն. գոնէ այս է աղոր բնական ու հաւանական մեկնութիւնը։

1. — Իշխանական դրօշուց ու նշանաց գոյները տարբեր լինելու էին, մանաւանդ Արշակունեաց օրով, արքունական ծիրանիէն և ոսկիէն։ Եւ ամբողջովին չի յարմարիր մերոց՝ Փլորոսի նկարագիրը պարթև իշխանաց դրօշուց, յամի 53 ն. Ք. թէ «արքունի նախարարք Սիլաքս և Սուրէն սկսան ցուցանել նշանս յոսկի և ի մետաքսեայ դրօշս փոդփոդեալս» (Sarre, 353)։ Մետաքսը կրնանք նկատել մերոց վրայ ևս, բայց ոչ ոսկին, գոնէ Արշակունեաց վերջին դարերուն։ Ինչ կրնային լինել մեր իշխանականաց գոյները։ Հոս ալ կը պակասին մեզ դրական փաստեր։ Տեսանք՝ որ Ուրբելեանը խօսելով Վրաց ԺԱ դարու սովորութեան մասին, անոնց թագաւորական դրօշը «պիտակ կը դնէ և նշանը կարմիր (աստ, 17)։ Ինչո՞վ կարելի է մեկնել անոնց այս զանազանութիւնը ժամանակի ընդհանուր արքունական սովորութենէն։ Վրաստան յաջորդական թագաւորութիւն մը չունեցաւ, այլ երկարատև ընդհատումներով։ Ինձ կը թուի՝ թէ պիտանն անոնց իշխանական շրջանի գոյնն էր, որ թագաւորութեան վերահաստատութենէն վերջ ալ աւանդաբար մնաց անփոփոխ։

Նկատելով Վրաց դրացութիւնն ու քաղաքական սերտ կապերը հայ աշխարհի հետ, որ անոնց թագաւորներ ալ տուաւ Բագրատունեաց տոհմէն, հարկաւ անոնց աւանդութեամբք հանդերձ, կրնանք նոյնպէս ենթադրել մեր իշխանաց դրօշներու գոյնն ալ։ Արդէն յետ ծիրանւոյն՝ պիտակը քրիստոնէութեան և առաւելապէս Հայաստանի մէջ ազնուականագոյն երանգն էր միշտ,

© National Library of Armenia

սկսելով հեթանոսութենէն։ Անհտայ նուիրուած զոհերն սպիտակ էին. ամենէն հանդիսական օրերուն, ինչպէս մկրտութեան, զատկի և արքունի յուղարկաւորութեանց, Հայք սպիտակ կը զգենուին. նոյնպէս էր Պատարագի քահանայական հագուստն ալ. Թագաւորք ու կաթողիկոսունք սպիտակ ջորիներ կը լծէին իրենց կառաց կամ կը հեծնէին, և այլն, որոց մասին ուրիշ առթիւ։ Ուստի բնական հետևանք էր՝ որ մեր իշխանք իրենց վառերուն ընտրէին նոյն գոյնը, զանազանուելու համար արքունականէն, և նշանին համար՝ կարմիրը։ Բայց այս կարգը միջին դարերուն՝ թագաւորական զահերու յափշտակութեանց ու ձկտումներու այն տապին մէջ՝ թուլացած էր. որով Որբելեանք ԺԱ դարուն դեռ Վրաստանի մէջ, Վրաց արքունիքէն կ'ընդունին, կամ իրենց տոհմակից պատմիչն ընդունել կու տայ իրաւունք՝ «կարմիր ունել զվառ դրօշին, և սպիտակ նշան ի վերայ» (277)։ Կարմիրն իսկապէս Վրաց չունեցած ու տուած նուէրն էր, թէ նախանձոտ նմանողութիւն մը Ռուբինեանց (հմմտ. մասն Բ, Գ.)։

Այս դրօշուց ձեռ անտարակոյս հետևեցաւ ժամանակի սովորութեան, հին դարերուն լինելով չորեքկուսի երկար, և միջին դարերուն տտնաւոր (աստ, 8։36)։

2. — Իսկ իշխանաց նշանները։ Այս մասին ամենէն բախտաւոր՝ Մամիկոնեանք են հներէն, հայ բանակին վերին հրամանատար և հայ սրտին ամենէն մերձաւոր տոհմը, որոց նշանին նկարագիրը կու տայ մեզ Փաւստոս՝ հետևեալ բառերով. «աղաւնագոյիք, աղանայդրօշք, արծուանշանք, վարժականիչք» (Դ, Բ)։ Այս կոչումները պարզենք ու հշդենք։

Հայկազեան բառգիրքն աղանայդրօշքը կը փորձէ մեկնել՝ «յանուանէ արդեօք Ալանաց քաջաց կամ Աղուանից, կամ ի նմանութենէ աղաւնեաց»։ Սակայն ընդունելի չէ «Ալանաց» մեկնութիւնը. զի Փաւստոս՝ որ երեք անգամ «յաշխարհէ ՃԵնաց» կը դնէ Մամիկոնեանց ծագումը (Ե, Գ, Լէ), չէր կարող նաև յԱլանաց (աղանայդիք) համարել զանոնք։ Պատմիչս և ոչ հիացող մ'է Ալանաց վրայ, զորս կոտորել կու տայ Մամիկոնեան վաչէի (Գ, Է). ոչ այլ Աղուանից՝ զորս Պարսից դաշնակից կը դնէ Հայոց ու Մուշեղայ դէմ (Ե, Գ, ԺԳ). որով չէր կարող փառաւորել Մամիկոնեանքն անոնց թշնամեաց ցեղակցութեամբ ու դրօշով։ Իսկ երկչոտ աղաւնին շատ անճահ էր պատերազմի առաջնորդ մը լինելու և ճախրելու Արշակունեաց արծուոյն պատուիչ հագուստներուն մօտ։

Հետևաբար Փաւստոսի ընթերցուածը ճշդելու ենք Մեսրոբայ բառերով՝ որ հետևող մ'է անոր ու խմբագրիչ։ Այ՝ Բիւզանդայ այդ տեղին կը կարդայ՝ «աղեղնաՀիք, արծուանշանք... աղեղնադրօշք» (Մոփերք, Զ, 17)։ Հոս աղեղնաՀիք գեղեցկայէն կ'ուզղէ նախորդին աղանայդիքը. աղեղնադրօշք՝ անոր աղանայդրօշքը. և արծուանշանք՝ նոյն է երկուքին քով։ Ուրեմն Մամիկոնեանց դրօշին նշաններն էին՝ Փաւստոսի շարադրութեան կարգով՝ նախ նետընկէց աղեղն, որոյ նմանը կար և ուրիշ ազգերու քով. պարսիկ հին դրամներէ ոմանց վրայ՝ արքայից արքայն աղեղ կը քաշէ (Ազգր. Հնդ. 1912, թ. 1, էջ 220)։ Նոյնպէս կը ներկայանայ ասորական նշանաց մէջ Ասուր աստուածը. և Եգիպտոս իւր նշանաց կարգին ունէր նաև զոյգ մը նետեր՝ գետեղած խաչաձև (Darem. Դ, 1308)։ Աւելին կայ. Մարկոս Անտոնիոսի մէկ դրամին վրայ (35 Ն. Քրիստոսէ առաջ) Հայաստան խորհրդանշուած է արշակունի թագով՝ որոյ հետ խառնուած են աղեղ մ'ու նետ մը[1]։ Այդ ժամանակէն զուցէ արդէն հայ նշանաց մէջ էր աղեղը։

Կարևոր կը համարիմ այս տեղ պատասխանել համառօտիւ Պր. Գ. Բէլպասեանի ստեղծած մէկ երկդիմութեան, որ կ'ախորժի «աղեղնադրօշի» սիդեղ արմատով ծիածանն իմանալ, և զայս տեսնել «Հայերուն» դրօշին վրայ Դ դարէն[2]։

1. Grueber, *Coins of the Roman Republic*, տպ. 115, թ. 10։

2. Ազատ հանդէս, 1918, էջ 264–6։

© National Library of Armenia

դիտել կու տամ նախ՝ որ «աղեղնադրօշ» մակդիրը՝ միայն Մամիկոնեանց տրուած է պատուութեան մէջ, և ոչ Արշակունեաց կամ ընդհանուր Հայոց։ Երկրորդ՝ աղեղն իբր ծիածան՝ Ղ. Գրոց և ուրիշ թարգմանութեանց մէջ նիւթական ու դիտուելուոր կրկնութիւն է բնագրին՝. իսկ իւր հայ դասական միակ իմաստն է նետաձիգ գործին, բառին թէ պարզ ձևին և թէ ոսկեդարեան բարդութեանց մէջ, ինչպէս աղեղնաւոր, աղեղնայիկ, աղեղնակապարձ և այլն։ Երրորդ՝ նոյն ինքն Մեսրոպ՝ որ կը նշդէ փաւստոսի աղեղնադրօշը ընթերցուածը, անոր մօտ կը գրէ նաև աղեղնաձիգը, որպէս զի դիւրաւ տեսնենք երկուքին մէջ արմատին իմաստի միութիւնը։ Չորրորդ՝ գունագոյն ծիածանը, աւելի կանացի ախորժակաց նիւթ, չէր կրնար հաշտուիլ ռազմագոռ Մամիկոնեանց հետ, որոց պարծանքն էր «պաքօքն զքիրսն ջնջել», ինչպէս կ՝ըսէր Մուշեղ (Փաւստ. Լ, Լ.Ե), և առաջնորդել « աղեղնաւորք անվրէպք կոլովիք » բանակաց (Նոյն, Դ, Ի)։ Հինգերորդ՝ անկարելի և անդէպ է հայ դրօշուց վրայ որոնել՝ զանազանութիւն գոյներու այն շրջանին՝ երբ այս ոճն անծանօթ էր բոլոր աշխարհի, ինչպէս ըսինք կանխաւ (աստ, 5)։ Այն դարերուն Հայերն ամբողջ մարդկութեան հետ ծիածանը կը նկատէին « յամպս », զի դեռ չէր իջած փաթթուած հայ Մասսի սպիտակ կատարին, և կը համարէին զայն « ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ Աստուած և ընդ ամենայն երկիր » (Ծննդ. Թ, 13). որով բնաւ չխորհեցան սեպհականել զայն որ և է ձևով, ոչ ալ թողին այս մասին որ և իցէ յիշատակ։ Ուստի, կը կրկնեմ, Մամիկոնեան դրօշին աղեղը՝ զէնքն իսկ էր։

Անոնց երկրորդ նշանն էր արծիւն՝ ըստ կրկին պատմչաց, որով և անկարօտ ապացուցանելու, այնքան խորհրդաւոր և յարգի ամէն ազգաց ռազմիկներու համար, ինչպէս տեսանք (աստ, 9)։ Ասոր հոմանիշ է և աւելագրութեամբ գործածուած՝ – որոյ համար Մեսրոպէն դուրս թողուած է՝ – փաւստոսի վարժնականիշը, յորում Հայկազեանն իրաւունք ունի ենթադրելու վարուժան (ուսկից հարկաւ վարուժանակ = վարժնակ) արմատը, որ է արծուի և այլ թռչնոց արուն։ Եւ արդարև արծրունի տիկինն Սոփի՝ յանձին իւր Դերենիկ ամուսնոյն կ՝ողբար « զոսկեփետուր ախոյանարձակ քաջազգի վարուժանն... զարձրաթիռ արծիւն » (Թովմ. 299)։ Կարելի է նաև փաւստոսի հոմանշերն՝ « արծուենշանք վարժնականիշք՝» իմանալ իրարու լրացուցիչ, իբրև արու արծիւ կրող։ Ի հաստատութիւն Մամիկոնեան արծուին կրկենք նաև մեր վերև յիշածը՝ որ Մանուէլ սպարապետը Պարսից արքայէն ստացաւ ի մէջ այլոց նաև « զարդմանակ ոսկի արծաթ », որոյ վրայ նստած էր արծիւ մը (Փաւս. Ե, ԼԸ)։ Սաղաւարտին վրայ ևս տոհմային նշանը կրել՝ սովորական էր ամենուն, ինչպէս տեսանք (աստ 10)։

Արդ՝ մամիկոնեան դրօշուն նշանները կրկին էին, արծիւն և աղեղն, ոչ զանազան վառերու վրայ, — զի հնութեան մէջ անսովոր է մէկ տոհմին երկու աննման դրօշներ, ինչպէս դիտեցի կանխաւ, — այլ միասին մէկ կտաւի վրայ. զոր օրինակ՝ (այսպէս կ՝ախորժիմ երևակայել, որովհետև բարդ նշաններն իրարու խառնուած էին միշտ՝) աղեղն արծուոյն մագիլներուն մէջ, նշանակելով հայ զօրութեանց սրաթռիչ ու քաջաղեղն հրամանատարը։ Ինչպէս չանթընկէց Արամազդայ արծիւն ալ կայծակ մ՝էր բռնած հին դիցաբանութեան մէջ, և իւր պատկերով քանդակուած դրամոց վրայ (Darem. Գ, 703). և նոյն արծիւը կը կրնն նաև Դոմետիանոսի, կո-

1. ցն. τόξον (Ծննդ. Թ. 13, 14, 16. Եզեկ. Ա, 28), որ նոյնպէս կը նշանակէ նետընկէց զօրին, և հետևաբարութիւն է երբայական բնագրին, որոց երկուքն ալ նմանութեամբ տուած են կոչումս ծիածանին՝ իբր Աստուծոյ նետընկէցը. «զաղեղն իմ եղից յամպս».ապա թէ ոչ՝ Յոյնք Երիս կը կոչէին ծիրանի գօտին, ինչպէս մեք ալ ծիածան։

© National Library of Armenia

մոդոսի և այլոց անտիոքեան դրամները[1], Պոդոմանց բոլորը[2], Սելևկեանց և նախ քան զԱրշակունիս Հայաստանի իշխեցողաց ոմանց դրամները։

3. — Պարապետական նշանէն զատ՝ ինձ կը թուի թէ Սիւնեաց պատմիչն ալ Որբելեանց նշանին կ'ակնարկէ, երբ յետ յիշելու անոնց դրօշին գոյները, կը յարէ իսկոյն իբրև անոնց իրաւունք. «ի շրջել առաջի թագաւորին (Վրաց) և ի կանգնելն՝ ունել ի ձեռն գաւազան առիւծագրոյ» (277)։ Այս գաւազանը սեպհական էր ոչ արքային, այլ արքունի պաշտօնէից ոմանց, ինչպէս սովորութիւն էր յարևմուտս ալ. և ահա Որբելեան իշխանին կրածն առիւծի գլուխ ունի, ինչ որ անոնց նշանն իսկ ենթադրել կու տայ. և զոր բնական էր թէ պահէին՝ զՍիւնիք իրենց հայրենիք ընելէն վերջ ալ։ Հոս ալ ուշագրաւ է նմանութիւնը Ռուբինեան նշանին հետ, ինչպէս դրօշի գոյնին մէջ (աստ, 68)։

4. — Իշխանական վառերն իրենց բուն ունէին նիզակ մը, և անոր վրայ հաստատուած պնդապէս իրենց լայնութեամբ. ինչպէս կ'երևի Մերուժանայ օրինակէն, որոյ նշանակիրն «պնդանն զնիզակաւն պատեալ» յարձակեցաւ Արտաւազդայ վրայ (Փաւս. Ե, ԹԳ). կը պատմէ՝ որովհետև անբաժանելի էր նիզակէն, ըստ որում այդպէս պնդուած կը պահանջէր պատերազմի ժամուն ալ, որպէս զի դրօշը չբաժնուէր տիզէն։ Մեսրոբ երեց եթէ չէ կարող տանիլ զմեզ մինչև Դ դար, սակայն հին սովորութեան դեռ շարունակութիւնը կը ցուցնէ Դ դարուն, երբ կ'ըսէ թէ Մուշեղ «զդաստառակն սրբոյն Ներսիսի ի գեղարդն իւր կապէր», և իրեն դրօշ բրած զայն՝ կը յարձակի թշնամւոյն դէմ (Սոփերք, Զ,73)։ Կապէր, ահա ուրեմն նիզակին յարելու կերպն ալ լարերով հաստատել։

5. — Հին Հայաստան պահած է մեզ զանազան ուշագրաւ քանդակներ։ Այսպէս Տաշրաց կամ այժմու Լօռի գաւառի Դսեղ գիւղին մէջ, ուր ԺԲ դարուն հաստատուեցան Մամիկոնեանք, զանգակատան որմին վրայ կայ երկգլխի արծիւ մը, որ ճապաղներով գառնուկ մ'է բռնած։ Նոյն ձևը կ'երևի ֆիշեալ գիւղին ոչ հեռի՝ Բարձրաքաշ Ս. Գրիգոր եկեղեցւոյն պատին վրայ ևս։ Այս արծիւը Մամիկոնեանց այդ իշխանութեան մէջ՝ նոյն տոհմի նշանն իսկ համարեցաւ Պ. Ե. Լալայեան (Ազգր. Հանդ. 1901. 348, 423)։ Բայց վարկածս հեռի է իրականութենէ. ոչ միայն անոր համար՝ որ անոնց հին նշանին չի համապատասխաներ իւր մասանց մէջ, այլ որովհետև այդ նոր ձևը միջին դարուն շատ տարածեալ է Հայաստանի մէջ՝ անկախաբար Մամիկոնեան զարմէն։ Այսպէս կայ այն Սիւնեաց Ցախացքար գիւղի Ս. Կարապետ եկեղեցւոյն վրայ 1041էն (Լալայ. ըանկր.), կառուցուած ոչ իշխանէ մը, այլ Վարդիկ վանահօրէն՝ ըստ արձանագրին՝. — Նոյն գաւառի Մաղարդոյ ուխտին մէջ՝ տաճարի ճակատին, ձեռակերտ սիւնեցի Բարգէն եպիսկոպոսին 976էն, ու վերաշինուած ԺԷ. դարուն. բայց արծիւը միագլխի է (Սիսական, 518). — դարձեալ երկգլխի՝ Պռոշեանց հանգստարանին մէջ՝ յԱյրիվանս Գառնոյ, ԺԴ դարէն (Այրոտ. 339). — Նոյնը Սիւնեաց Ս. Սիոն անապատի զոյգ եկեղեցեաց միոյն վրայ, իւր քով ՉԼԱ (1282) թուականը. և աղօթավայրն անծանօթէ մը շինուած աւելի կանուխ, ունի քան զայդ հին արձանագրութիւն մը (Սիսական, 113). — Նոյն գաւառի Գոմոց գիւղի եկեղեցւոյն վրայ՝ 1263էն, շինուած Պռոշեանց օրով՝ երկու անտոհմիկ հարագատներէ (անդ, 174). և այլն։ Այսքան վայրերու, դարերու, տարազարմ և մերթ սոսկական շինողաց յատուկ այս քանդակն ուրիշ բան չէ, բայց եթէ եկեղեցեաց սեպհական զարդ մը, տարբեր Բագրատունեաց արծուենշանէն ևս (աստ, 11). և որոյ ծա-

1. W. Wroth *Catal. of the Greek Coins of Galatia.* ևն. տե. 22, 23 ևն.

2. R. S. Poole, *Catal. of Greek Coins* տե. 2–32.

3. E. Babelon, *Les Rois de Syrie, d'Arménie,* ևն. տե. 29.

4. Հ. Ղ. Ալիշան, Սիսական էջ, 152.

© National Library of Armenia

գումն իսկ արտաքին է, ոչ տոհմային։ Ապանց երկար ճառելու և թափառմանց, դիտել կու տամ՝ թէ այս ձևը շատ ծանօթ էր արևմտեայց ալ (Auber, Դ, 464)։ Եւ ինձ շատ մօտ, Վենետկոյ Ս. Մարկոսի և Կարմեղեանց, հնոյն Տուրչիսի (Torcello) և այլ վաղեմի եկեղեցեաց ոմանց վրայ ես իսկ կը տեսնեմ նոյն արծիւը, միագլխի, ճանկերով բռնած նապաստակ մը, օձեր և այլն, կանգնած մեր արծուին դիրքով, և մերթ կառուցը դրած որսին վրայ։ Ինձ ախորժելի է՝ այս ձևը թարգմանն համարել աւետարանական բացատրութեան, «Որ գէշն իցէ՝ անդր ժողովեսցին արծուիք», և ի խորհուրդ հասարակաց յարութեան՝ զոր կ'առակէ Փրկչին այս իսօքը, քան թէ Օրերի անապացոյց կարծեօք՝ արծուին վրայ նկատել սատանայն՝ որ կը յափշտակէ հոգիները (անդ)։

Հայաստանի մէջ կ'երևին ուրիշ պատկերաւոր քանդակներ ալ, որոց վրայ նոյնպէս գժուարին է որ և է տոհմային նշան նկատել։ Այսպէս Ցախացքարի երկրորդ տաճարին՝ Ս. Յովհաննու որմին վրայ կայ քանդակ մ'առիւծու, յարձակած զուարակի մը վրայ գլխոյն կողմանէ (Լալայ. յանկր.), և եկեղեցին շինուած է ոչ ազնուականէ, այլ 1041ին՝ վերոյիշեալ Վաղդիկ վանահօրէն (Սիսական, 152-4). որով առիւծս պարզապէս զարդ է նման անոր քանդակած արծուին՝ զոր տեսանք վերև։ Մի և նոյն ձևը, հարկաւ նոյն նպատակով ալ, կայ դարձեալ Սիւնեաց Թանահատի ուխտին եկեղեցւոյ գմբեթին վրայ (Լալայ. յանկր.), կառուցուած ԺԴ դարուն Պռոշեանց ձեռօք (Սիսական, 120), որոց տիրապետութիւնն այդ կողմերը կը սկսի նոյն դարու կիսուն, և իրենք կը սեղէին Խաչենոյ տնէն (անդ, 92)։ Ընդ հակառակն նոյն Պռոշեանց դամբարանն յԱյրիվանս՝ վերոյիշեալ գառնաբարձ արծուին վրայ ունի նաև երկու առիւծներ դէմ առ դէմ, և ապանց մէջտեղ նոխազի գլուխ մը, որոյ բերանէն կը մեկնի գալարուն պարան մը և կը կապուի գազանաց վզերուն։ Հ. Ալիշան կը փորձուի սոյն քանդակիս մասին ըսելու՝ թէ «Նորին Պռոշի նշան թուի» (Այրար. 341, 343)։ Սակայն մի և նոյն տոհմէն քանդակուած երկու ձևերուս անանմանութիւնը, և երկրորդին խառնուրդը զարդի արծուին հետ, չեն ներեր ոչ միոյն վրայ անոնց նշանը տեսնել։ Թանահատի տաճարին կից մատրան վրայ քանդակուած է նաև ձիաւոր մը, որ առիւծի հետ կը կռուի, և անոր վերև սիրամարգ մը, երկու հաւ և այծեամ մը (Սիսական, 120)։ Որսական տեսարան մ'է պարզապէս։ — Սիւնեաց Հերհեր գիւղի շիրմի մը վրայ, թռչականն ու ոչէն անայտ, կայ նոյն առիւծն յարձակած եզան կամ ցլի վրայ, առաջինը նայողին աջ կողմէն, և միւսը՝ ձախէն, հակառակ նախորդ ձևերուն. իսկ երկու կողմանէ կանգնած են մէկ մէկ մարդ (Լալայ. յանկր.)։ Դարձեալ զարդի պատկեր մը։ — Շիրակայ Տայլար գիւղի եկեղեցւոյն վրայ, շինուած՝ ինչպէս կը թուի՝ ԺԳ դարու սկիզբը և անծանօթէ (Շիրակ, 17), քանդակուած են երկու առիւծ, որ կը յարձակին երկուստեք զոյգ մ'այծեմանց վրայ (Հ. Գրբ. Նահապ. յանկր.)։ Միշտ զարդ։

Այս քանդակազարդերէն ոչ միոյն վրայ, կը կրկնեմ, կարելի չէ մեզ ազնուականութեան մը խորհրդանշանը նշմարել։ Մեր իշխանական տոհմերը միջին դարուն, յոգնած ու մերձ ի վախճան, չունին ժամանակի արևմտեան դեռածին ազատաց նոր բաւէր եռանդը՝ ցուցադրելու շինուածոց վրայ իրենց սեպհական նշանները, որոց գործածութեան հին պայմաններն ալ (ասա, 67) արդէն կը պակսէին մերայնոց։ Եւ ես յիշեցի և լուծեցի հայ հնութեանց վրայ զրոշմուած ինձ ծանօթ քանդակները, որպէս զի ուրիշներ ալ չհրապուրուին՝ այդպիսեաց իրականէն տարբեր խմաստներ ընծայելու։ Որով կրնանք պնդել՝ թէ մեր նախաբարութեանց մէջ բաց ի Մամիկոնեանց և քիչ մ'ալ Որբելեանց, այլոց դրօշներու մասին հաւատի ծանօթութիւնք ու նշմարանք կը պակասին մեզ տակաւին։

(Շարունակելի) Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

© National Library of Armenia